ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 793-Ա « 04 » հուլիսի 2025 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված՝ «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 254-Ն որոշումը, Երևանի քաղաքապետին կից «Սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի» անհատական կազմը հաստատելու մասին 2025 թվականի մայիսի 27-ի Երևանի քաղաքապետի N 2103-Ա որոշման համաձայն՝ Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների շրջանակում Երևանի քաղաքապետին կից գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի 2025 թվականի հունիսի 23-ի նիստի արձանագրությունը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունվարի 14-ի N 103-Ա որոշումը՝

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեով Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժին 07 խմբի 01 դասի «58. Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածով նախատեսված գումարներից, աջակցություն սոցիալական աջակցության կարիք ունեցող ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման նպատակով, հատկացնել 1.020.000 ՀՀ դրամ՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի վրա:

3. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ